

Գրքի մասին քննարկում

Մ Գ Օ Տ


Ե Լ Տ Բ

Գ ու Վ ի ի ռ

Գ ու Բ Բ

Կ. Պ. Պ. Պ.

1909





ՄԻ ՀՕՏ ԵՒ ՄԻ ՀՈՎԻԻԻՆ

Շ Ո Ւ Ք Ը

Գ. Ա.
N 70215



Գրադարան

Կ. ՊՈՒՆՅԱՍ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏՅՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՔ

—
1909



ՀԱՌԱՋԱԲԱՆ

Ազնիւ ընթերցողք,

Համակիրներս մեծ փափաքներով ինձմէ խնդրեցին որպէս զի Մի հօս եւ մի հոյիւրի պարագաներուն վերաբերեալ բացատրութիւններով հոգեւոր գրքոյի մը հրատարակեմ, ես ալ անոնց փափաքներուն գոհացում տալու նպատակաւ կարելի եղածին չափ աշխատեցայ և Աստուծոյ շնորհիւր մի քանի հատ յարմարաւոր առակներով ու սրտաշարժ ստանաւորներով սոյն հոգեւոր նուէրս պատրաստեցի, ուստի յատկապէս կը խնդրեմ բոլոր ընթերցողներէն որպէս զի լաւ ուշադրութեամբ կրկին և կրկին ծայրէ ի ծայր կարդալով, և պարունակութեանը լաւ տեղեկանալով, իրենք ալ իրենց կարգին կութեանը լաւ տեղեկանալով, իրենց ալ իրենց կարգին իրենց պարագաներուն և իրենց ձայներնին հասած տեղերը քարոզելու ու տարածելու աշխատին, որպէս զի բոլոր լսողները գիտնալով հասկնալով մաքուր սրտով ու կատարեալ հաւատքով և ջերմեռանդութիւններով Աստուծոյ օգնութիւնը խնդրեն, և որպէս զի ամենակարողն Աստուած իրեն հզօր ձեռքերովը և իրեն բարձր բազուկներովը իրեն խօսակցանը համեմատ օր առաջ այն երջանիկ օրերը աշխարհին ցուցունելու բարեհաճի:

Մնամ աղօթող բարերարաց անձնուէր

ՎԱՀԱՆ ԲԱՀ. ԺԱՄԱԿՈՉԵԱՆ

Չմեկամագցի

Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոց
1909 Մարտ 7

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵԱՆԻՍ

Գ. Ա.

N 70215

Ազնիւ ընթերցողք,

Սոյն աշխատութեանս տպագրութեանը ծախքին պիրայօժար օգնեցին և մասնակցեցան այլ և այլ օգնութիւններով հետեւեալ բարեսէրները, որք են՝ Պարոն Նշան Մանկիկեան Ապուշեխցի, Պարոն Գէորգ Պապայիկեան Ապուշեխցի, Պարոն Սարգիս Կոստանդեան Ապուշեխցի, Պարոն Պաղտասար Գարակիւղէլեան Կասմացի, Պարոն Մովսէս Ժամակոչեան Ակնեցի, Պարոն Համբարձում Սիրունեան Ակնեցի և Պարոն Մանկասար Փալանձեան Ակնեցի: Ուստի պարտ է մեզ ի սրտէ բարեմաղթել որպէս զի կատարեսցէ Տէր Աստուած զբարի բաղձանս սրտից սոցա և ամենայն պարագայիւք հանդերձ օրհնելով զօրացուցէ, շնորհիւ իւրով զարգացուցէ, առողջութեամբ լցուցէ և յաջողութեամբ պսակեսցէ, աշխարհի աստ բազում ամս երկար կենօք խաղաղութեամբ և խնդութեամբ ի խոր ձերութեան հասուցէ, և յետ աստի կենացս երկնից սուրբ արքայութեան և անթառամ պսակին արժանացուցէ ամէն:

Մնամ աղօթող ճշմարտասիրաց անձնուէր

ՎԱՀԱՆ ԲԱՀ. ԺԱՄԱԿՈՉԵԱՆ

Չմեկամագցի

Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոց
1909 Մարտ 22

Միրելի համակիրներս

և հաւատարիմ բարեկամներս,

Ձեր հոգեւոր փափաքներուն գոհացում տալու նըպատակաւ, կարելի եղածին չափ աշխատեցայ՝ Մի հօտ եւ մի հովիւրին նկատմամբ իմին ունեցած գաղափարներս և համոզումներս մի քանի հատ յարմարաւոր առակներով համառօտիւ մը բացատրեցի, որովհետեւ շնորհիւ Սահմանադրութեան՝ խօսելու և գրելու ազատութիւնը բաւական կը վայելենք, փառք Աստուծոյ, առաջուան բռնապետութիւնը չը մնաց, կը տեսնենք որ մամուլին ընդհանուր չըթնակապը աղէկ մը թուլցած է, և հետզհետէ բոլորովին իյալու պիտի մօտենայ, ըսել կուզեմ թէ այժմ ամէն մարդ ազատ է իրեն բարի խորհուրդները, գաղափարները, համոզումները և կարծիքները օրինաւոր սահմանի մէջ հրապարակաւ իրեն բարեկամներուն, համակիրներուն և ծանօթներուն յայտնելու, թէ եւ ումանք կը կարծեն թէ՛ ես նիւթապէս շահուելու նպատակաւ գիրք կը հրատարակեմ, այս առթիւ անցեալները ծանօթներէս մէկը ինծի ըսաւ թէ՛ նոր հրատարակած գիրքէդ այսինքն Ծանուցում մեծ պահողէն որչափ դըրամ շահեցար, պատասխանեցի թէ՛ կատարեալ ճշմարտասէրները առաքինութիւններ գործած ժամանակին օ եւ է նիւթական շահախնդրութիւններ և փոխարինութիւններ չեն ակնկալեր, և մինչեւ իսկ մեծամեծ զոհողութիւններու ալ յանձնառու կը լինին և կատարեալ հաւատքով Աստուծոյ կը սպասեն և կակնկալեն իրենց տրուելիք վարձատրութիւնները, ինչ և իցէ, ուրիշները թող այնպէս կարծեն, այժմ դառնանք մենք մեր խընդրոյն, սիրելիներս, այս հետեւեալ առակներովս ըսել կուզեմ թէ՛ Աստուած ամենաբարին օր մը չէ օր մը ի-

րեն հզօր ձեռքերովը և իրեն բարձր բազուկներովը նըմանը չտեսնուած և խելքէ մտքէ չանցած խիստ շատ մեծ հիւանալի հրաշք մը գործելով բոլոր ազգերը մէկէն ի մէկ պիտի լուսաւորէ, զորօրինակ. ինչպէս որ Աստուած Պսոսից Կիւրոս թագաւորին հօգին արթնցուց, որ անիկա իրեն հօրը քանդած Երուսաղէմի տաճարը վերանորոգեց, և իրեն հօրը այն տեղէն կողոպտած բոլոր ոսկեղէն անօթները իրենց տեղը վերադարձուց:

Այսպէս ալ Աստուած ամենաբարին բոլոր ազգերուն հոգիներնին պիտի արթնցնէ, սիրտերնին պիտի միացնէ և միտքերնին պիտի լուսաւորէ և այսպէսով բոլոր ազգերուն մէջ զսնուած աւելորդապաշտութիւնները մոլութիւնները, նախապաշարումները, խտրութիւնները, պառակտումները և տարբերութիւնները վերցնելով՝ մի հօտ և մի հովիւր պիտի ընէ վերջապէս նոր սիրտ պիտի տրուի բոլոր մարդկութեան սիրահար, պիտի ըլլան արդարութեան, չը պիտի հետեւին ամբարշտութեան, քարոզիչ պիտի ըլլան ճշմարտութեան, ինչպէս որ գրուած է. ամենայն ձորք լցցին և ամենայն բլուրք խոնարհեցին և եղիցին ամենայն դժուարինք ի դիւրինս եղիցի, երկինք նոր և երկիր նոր եղիցին, առաջինք յետին՝ և յետինք առաջինք, և թէ անաւասիկ զամ ժողովել զամենայն ազգս և զլեզուս. և յայնմ ժամանակի զայլք և զառինք ի միասին ճարակեցցին և առիւծն իբրեւ զեղն յարդ կերիցէ, և կոտորեցցեն զսուսերս իւրեանց և արասցեն զխօփս, եւ այլն, եւ այլն: Այսպիսի շատ մը հիւանալի և սքանչելի մարգարէութիւններ կան մի հօտ և մի հովիւր խորհուրդին նկատմամբ, որոնք դեռ կատարուած չեն և տակաւին նոր պիտի կատարուին: Ինչպէս որ հին իսրայելացիները մարդեղութեան խորհուրդին վերաբերեալ մարգարէութիւնները դարերով կարողացին և անոնց իմաստը կատարելապէս չհասկցան,

մինչեւ որ խոստացուած մեծիան աշխարհք եկաւ և մարդեղութեան խորհուրդին վերաբերեալ գրութիւնները կատարեց, այս պատճառաւ Յիսուս փրկիչը շատ անգամ կը յիշէր և կըսէր իր ըրածներուն նկատմամբ. թէ զի գիբըն լցցի այսպէս ալ նոր իսրայէլ կոչուած բոլոր քրիստոնեաները թէպէտ և դարերէ ի վեր կարդացած են մի հօտ և մի հովիւին խորհուրդին վերաբերեալ մարգարէութիւնները, բայց անոնց իմաստներին կատարելապէս հասկցած չեն, երբ որ մի հօտ և մի հովիւը ինի, այնուհետեւ պիտի հասկնան այն սքանչելի գրութիւններուն իմաստը, ուստի յատկապէս կը յորդորեմ զձեզ, որպէս զի սոյն գրութիւններս կրկին և կրկին լաւ մտադրութեամբ կարդալով՝ պարունակութեանը կատարելապէս վերածատու լինիք և ձեռքերնիդ հասած տեղերը տարածէք, որպէս զի մեր աշխատութիւնը զուրջանք և անօգուտ վաստակ չը լինի, դուք ալ գիտէք որ այսպէս խիստ շատ բարի վարդապետութիւններս յայտարարելուս համար էր որ այսչափ երկօր տարիներ անխիղճներէն անտանելի նախատինքներ, վիշտեր ու տառապանքներ կրելով ճշմարտութեան համար ընտանեօք հանդերձ կենդանի նահատակ ու մշտնջենաւոր գոհ եղած եմ: Նաեւ գիտէք որ Յիսուս փրկիչը իրեն կենդանաբար վարդապետութիւնները միշտ յարմարաւոր առակներով կը բացատրէր, ինչու որ խնդրոյ մը էութիւնը առակներով բացատրելը աւելի գիբըն կը լինի, այս առթիւ ես ալ Աստուծոյ շնորհիւր յարմարաւոր առակներով բացատրեցի մի հօտ և մի հովիւին վերաբերեալ վարդապետութիւններս:

Այս ալ գիտնալու էք, ինչպէս որ Քրիստոսի հակառակորդները անիրաւութիւնով, տգիտութիւնով, նախանձութիւնով և բարկութիւնով անիկա ատեցին, նախատեցին ու թշնամանցին, այսպէս ալ մեր բոլոր չարախօսները այս մի քանի տեսակներովը յայտնապէս ճշմարտութեան դէմ մեղանչեցին, բայց վերջը ամօթով պիտի լինին:

Սիրելիներս,

Աստուածաշունչ Սուրբ Գիրքը ամենապատուական և բոլորովին անգին գոհարներով լցուած, զանձաբան մըն է, որ ոչ կառնուի և ոչ ալ կը ծախուի, այսու ամենայնիւ ըսել կուզեմ թէ՛ եթէ Աստուած յատկապէս մէկու մը յայտնի չընէ, կարելի չէ որ մէկը Աստուածաշունչին մէջ գտնուած մարգարէութիւնները ամբողջովին հասկնայ, և պէտք եղածին պէս ուղիղ բացատրելու կարողանայ. իմ խօսքերս լաւ ըմբռնեցէք:

Սիրելիք, Աստուածաշունչ Սուրբ Գրքին մէջ բացի այլ և այլ ժամանակներու և դարերու մէջ պատահելիք աշխարհային դէպքերուն կամ գործուելիք հրաշքներուն վերաբերեալ մարգարէութիւններէն, և բաց ի այլ և այլ ժամանակներու և դարերու մէջ ամբարիշտներուն տըրուելիք պատիժներուն ու պատուհասներուն վերաբերեալ մարգարէութիւններէն, մասնաւորապէս երեք տեսակ կրօնական մեծ մարգարէութիւններ կան, որոնք յատկապէս Աստուծոյ անքննելի երեք մեծ խորհուրդները կը կազմեն, այս երեք տեսակ անքննելի մեծ խորհուրդներուն առաջինը մարդեղութեան խորհուրդն է, և անոր վերաբերեալ մարգարէութիւններն են, երկրորդը մի հօտ և մի հովիւ ըլլալու խորհուրդն է և անոր վերաբերեալ մարգարէութիւններն են, երրորդը դատաւորան ըլլալու խորհուրդն է և անոր վերաբերեալ մարգարէութիւններն են, բայց պէտք է գիտնանք որ այս երեք տեսակ կրօնական մեծ ու անքննելի խորհուրդներուն վերաբերեալ մարգարէութիւնները մէկըմէկու հետ հիւսուած են, այնպէս որ եթէ մէկը մասնաւորապէս Աստուծոյ շնորհք մը չունենայ, կարելի չէ որ այս մարգարէութիւնները մէկըմէկէ որոշելու և պէտք եղածին պէս ուղիղ բացատրելու կարողանայ, չէ թէ ուրիշները, նոյն իսկ մար-

գարէութիւնները շարադրող մարգարէներն ալ, իրենց գրած մարգարէութիւններուն իմաստը և մեկնութիւնը չեն հասկցեր, զորօրինակ. իշխան մը թէ որ իր ծառային ըսելու ըլլայ թէ այս ինչ մարդը կանչէ որ քովս գայ, թէ և ծառան իշխանին հրամանը կատարելու համար իշխանին ուղած մարդը կը կանչէ, բայց իշխանին միտքը, նպատակը և խորհուրդը չի հասկնար, թէ իշխանը մարդը ինչու համար կանչել կուտայ, բան մը պիտի տայ. անոր, կամ բան մը պիտի պահանջէ այն մարդէն, չի հասկնար, այսպէս ալ մարգարէները ինչ որ գըրեցին, Աստուծոյ հրամանաւ գրեցին, և սուրբ հոգիէն շարժեալ խօսեցան, (տես երկրորդ թուղթ Պետրոսի առաջին գլուխը 21 համարը), բայց իրենց գրութեանը իմաստը և Աստուծոյ խորհուրդը չը հասկցան, թէ Աստուած ի՛նչ նպատակաւ գրել կուտայ այն խօսքերը, զորօրինակ. Դաւիթ մարգարէն կըսէ թէ, « ծակեցին զձեռք իմ և զոտս իմ, և թուեցին զամենայն ոսկերս իմ, նոքա հայեցան և տեսին զիս» (տես Սաղմոս քսանը մէկ գլուխը): Բայց աշխարհաբառին մէջ (քսան երկու գըլուխը): Ըսել կուզեմ թէ՛ Դաւիթ այս խօսքերը գրած ատենը, այս խօսքերուն իմաստը չը հասկցաւ, միայն թէ Աստուծոյ հրամանը կատարելու համար գրեց, և հրեաներն ալ մինչեւ ցայժմ այս խօսքերուն իմաստը չեն հասկցեր, և առաքեալներն ալ Յիսուսէն լսեցին և սուրբ հոգիէն հասկնալով քարոզեցին թէ՛ այս խօսքերը Յիսուսի խաչելութեան վրայ գրուած էր, նաեւ Նրեմիա մարգարէն այսպէս կը գրէ. «Կացուց զիս ի վերայ իշխանութեանց, խել և բրել յատակել և կորուսանել, տնկել և շինել, տես Նրեմիա առաջին գլուխը, տասը համարը»: Բայց այս խօսքերուն իմաստը ոչ գրողը հասկըցաւ և ոչ ալ մինչեւ հիմա կարգսօցողները հասկցած են: Այս խօսքերը մի հօտ և մի հովիւ ըլլալու խորհուր-

դին համար Աստուած գրել տուաւ, ըսել կուզեմ թէ ինչպէս որ մարգարէները իրենց գրութեանը իմաստը չը հասկցան՝ այնպէս ալ առաքեալները մի հօտ և մի հովիւ ըլլալու խորհուրդին վերաբերեալ մարգարէութիւնները և անոնց իմաստը կատարելապէս չը հասկցան, թէպէտ և սուրբ հոգւոյն շնորհք առին, բայց միայն Յիսուսի որդի Աստուծոյ ըլլալը հաստատելու համար պէտք եղած քարոզութիւնները ընելու կարողացան, իրենց որչափ որ գիտնալ պէտք էր. այնչափ գիտցան, բոլոր մարգարէութիւններուն իմաստը ամբողջովին չգիտցան և չհասկըցան, այս պատճառաւ Պետրոս առաքեալը ըսաւ թէ՛ ամէն մարգարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չունի, տես Պետրոսի երկրորդ թղթոյն առաջին գլուխը քսան համարը: Ամէն մարգարէութիւններուն մեկնութիւնը չը հասկցուիր ըսելու տեղ, ամէն մարգարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չունի կըսէ. վասն զի թէ որ չհասկցուիր ըսէր, թերեւս այն ժամանակ հաւատացեալներէն ըսողներ կը լինէին իրենց, թէ դուք ինչպէս առաքեալներ էք որ՝ բոլոր մարգարէութիւններուն մեկնութիւնները չէք հասկնար, զորօրինակ. թէ որ մէկէ մը բան մը կուզես և անիկա տալու կամք չունենայ, չունիմ կըսէ, չըսեր թէ ունիմ և չեմ տար, այսպէս ալ Պետրոս առաքեալը փոխանակ ամէն մարգարէութիւններուն մեկնութիւնները չը հասկցուիր ըսելու տեղ՝ ամէն մարգարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չունի կըսէ, ինչու որ մի հօտ և մի հովիւ ըլլալու խորհուրդին տեղեկութիւն չունէին, վասն զի անոնց որչափ որ գիտնալ պէտք էր Աստուած այնչափ գիտցուց: Ուրեմն գիտնանք որ բոլոր մարգարէութիւններն ալ մեկնութիւններ ունին ու պիտի կատարուին, այս պատճառաւ Փրկիչը ըսաւ թէ՛ « Հովտ մը որ նշանախեց մի է ոչ անկանիցի յօրինացն և ի մարգարէից, մինչեւ ամենայն եղիցի »,

ըսել ուզեց թէ մարգարէութիւններուն ամենէն պզտիկ խօսքն ալ պիտի կատարուի, պարապ չպիտի ելլէ, և վերջապէս թէ մարգարէները և թէ առաքեալները բոլոր մարգարէութիւններուն մեկնութիւնները ամբողջովին չի հասկցան և չի գիտցան, Տէրը որչափ որ գիտցուց այնչափ գիտցան, որովհետեւ անոնց՝ այնչափ գիտնալ պէտք էր, բայց Յիսուս Փրկիչը, ինքը Աստուած և Աստուծոյ որդի ըլլալուն համար բոլոր մարգարէութիւններուն ամբողջ մեկնութիւնները գիտցաւ: Այժմ այս խօսքերուս ճշմարիտ ըլլալը լաւ հասկցնելու համար մէկ երկու հատ յարմարաւոր առակներ պիտի ըսեմ, որպէս զի աղէկ մը խելքերնիդ հասնի...:

Ժամանակաւ խիստ շատ իմաստուն և օրէնսգէտ թագաւոր մը կար որ բոլոր ուսումնականները իրեն կանչելով ըսաւ թէ, ես բան մը խորհեր եմ, իմ խորհուրդս ձեզի պիտի յայտնեմ, վերջը այն թագաւորը երեք թել ձերմակ դերձան մէկզմէկու հետ հիւսել տուաւ այն ուսումնականներուն, և հիւսել տալէն վերջը այն հիւսուած թելերուն մէկ կողմի ծայրերնին գոյնզգոյն ներկել տուաւ, մէկ թելին ծայրը կարմիր, մէկինը կանանչ և մէկինը սեւ, և վերջէն ուսումնականներուն ըսաւ. ով որ հիւսուած թելերուն չի ներկուած կողմէն գիտնալու ըլլայ թէ ծայրը կարմիր թելը որն է, ծայրը կանանչը որն է և ծայրը սեւ թելը որն է, այսպէս եթէ ձեր մէջէն մէկ մը ներկուած թելերը ճշգրտութեամբ մէկզմէկէ որոշելու ըլլայ այն մարդը ինծի յատուկ փութանորդ պիտի ըլլայ, վերջը ուսումնականները շատ մը գիտողութիւններ ըրին, շատ խորհեցան և շատ քննեցին, բայց չը հասկցան և ըսին թէ՝ այս բանը ամենեւին չի հասկցուիր, ինչու որ թելերը մէկզմէկու հիւսուած են, վերջը թագաւորը ըսաւ թէ՝ ուրեմն մուկտիկ կանչել տուէք, ո՛վ որ այս բանը գիտնայ ինծի յատուկ

փութանորդ պիտի լինի: Վերջապէս մուկտիկ կանչել տուին, բայց մէկը չի գտնուեցաւ որ գործը հասկնալու կարող ըլլար: Վերջը աղքատ հովիւի մը տեսլեանը մէջ երեք անգամ այսպէս ըսուեցաւ, դուն գնա ըսէ թէ. ես այդ բանը գիտնալու կարող եմ, վասն զի երբոր դուն թելերը տեսնես, ծայրը կարմիր, թելին ծայրը քու աչքերուդ կարմիր պիտի երեւի, ծայրը կանանչ թելինը՝ կանանչ և ծայրը սեւ թելինը՝ սեւ պիտի տեսնես, վերջը այն հովիւը իւր հովուական գաւազանը ձեռքը առած՝ իւր հովուական հագուստներովը գնաց պէտք եղած տեղերը խօսեցաւ թէ այն հիւսուած թելերը ես մէկզմէկէ որոշելու կարող եմ, վերջը այն հովիւին խօսքերը լսողները անոր վրայ խնդալով ծաղր ըրին, և կըսէին թէ՝ այս հովիւը կատարեալ ապուշ է, և բոլորովին յիմար է, վասն զի այնչափ երեւելի ուսումնականներ կան և լեղուագէտներ կան և չեն հասկընար, այսինքն այն հիւսուած թելերը մէկզմէկէ որոշելու կարող չեն ըլլար և նոյն իսկ, քանի որ այն հիւսուած թելերը հիւսողներն ալ այն գործը չի հասկցուիր ըսին, այս թշուառ հովիւը ուր կը մնայ որ բոլորովին ագէտ և ցնորած մարդու մը կը նմանի, վերջապէս անիրաւ չարագործները ամէնքն ալ կըսէին թէ՝ կարելի չէ՝ որ այս յիմար հովիւը այն հիւսուած թելերը մէկզմէկէ որոշելու կարող ըլլայ, և հովիւն ալ կըսէր թէ եղբայրներ, ինչո՛ւ համար զիս զուր տեղը պարսաւելով կը նախատէք, չէ՞ք գիտեր որ Մովսէս մարգարէն ալ հովիւ էր, սակայն Աստուած անոր ձեռքովը Իսրայելացիները նգրիպտուէն հանեց, նմանապէս Դաւիթն ալ հովիւ էր, բայց Աստուած մարգարէ և թագաւոր ըրաւ, վասն զի Աստուած ագէտները և հովիւները կընտրէ որ ուսումնականները և գիտնականները չի նպարտանան, վասն զի Աստուած իմաստութեամբ իւրով իմաստութիւն աշխար-

հին այսորիկ յիմարեցոյց, և վերջապէս երբոր այն հովիւին խօսքերը թագաւորին պատմուեցան, թագաւորը այն հովիւը կանչել տուաւ և հովիւը այն հիւսուած թելերուն չը ներկուած կողմը տեսածին պէս պատմեց, կարմիրն այս է, ըսաւ այն՝ ըսած թելին ծայրը կարմիր մելանով կարմրեցուցին, նոյնպէս ալ կանանչ ըսածը կանանչ, և սեւ ըսածը՝ սեւ մելանով սեւեցուցին, վերջը հիւսուած թելերը քակեցին մէկզմէկէ. որոշեցին անոր ըսածին պէս ելաւ, կարմիր ըսածին միւս ծայրը կարմիր ելաւ, կանանչ ըսածին ալ կանանչ, սեւ ըսածին ալ սեւ: Այն ատեն բոլոր գիտնականները և ուսումնականները զարմանալով զարհուրեցան և ափ ի բերան ըլլալով՝ ապշեցան, և այն ժամանակը բոլոր անիրաւ չարախօսներուն բերաններին գոցուեցան, և այն աղքատ հովիւը թագաւորին փոխանորդ ընտրուեցաւ և բոլոր իշխանները անոր հնազանդեցան, տես Եօայեա քառասունը ինը գլուխը եօթը համարը: Այսպէս ալ այս երեք տեսակ գլխաւոր մարգարէութիւնները Աստուած ամենաբարին տարբեր տարբեր դարբերու մէջ, տարբեր տարբեր անձնաւորութիւններու հիւսել տուած է որ բաց ի Աստուածմէ՛՝ ամենեւին մէկը կ'սրող չըլլար անոնց ինչ ըլլալը հասկընալու, Աստուած որու որ յայտնելու ըլլայ միայն այն կը գիտնայ անոնց ինչ ըլլալը:

Այսու ամենայնիւ կուզեմ ըսել թէ՛ ինչպէս որ այն բարեխնամ թագաւորը իւր իմաստութեամբը այն երեք տեսակ թելերը մէկզմէկու հետ հիւսել տուաւ, այնպէս որ հիւսողներն ալ այն թելերը մէկզմէկէ որոշելու չը կարողացան, այսպէս ալ Աստուածաշունչին մէջ մասնաւորապէս բովանդակուած երեք տեսակ գլխաւոր կըրօնական մեծ ու անքննելի մարգարէութիւնները գրող մարգարէներն ալ այս թելերը հիւսողներուն պէս երեք տեսակ մարգարէութիւնները մէկզմէկէ որոշելու չը կա-

րողացան, վասն զի Աստուած այնպէս տնօրինեց, ծայրը կարմիր ներկուած թելը՝ Գրիստոսի վերաբերեալ մարգարէութիւնները կը նշանակէ. որ անոնք կատարուեցան, վասն զի Գրիստոս իւր սուրբ արիւնովը խաչափայտը կարմրեցուց, և ծայրը կանանչ ներկուած թելը՝ մի հօտ և մի հովիւին վերաբերեալ մարգարէութիւնները կը նշանակէ. որ անոնք չը կատարուեցան տակաւին, և նոր պիտի կատարուին, վասն զի երբոր մի հօտ և մի հովիւ ըլլայ բոլոր երկրին վրայ, Աստուածապատուութիւնը նորոգուելով պիտի ծաղկի և գարնան ծառերուն պէս կանանչնալով՝ արդիւնաւոր պիտի ըլլայ, ըստ այնմ թէ «Ծագեացի յաւուրս նորա արդարութիւն ըստ դում, և բազում խաղաղութիւն մինչեւ կատարեսցի լուսին», և ծայրը սեւ ներկուած թելը՝ դատաստանին վերաբերեալ մարգարէութիւնները կը նշանակէ, վասն զի դատաստանին օրը մեղաւորներուն և անիրաւներուն համար սեւ օր պիտի ըլլայ, որովհետեւ անոնք անմարելի կրակով պիտի այրին, որ ունիցի ականջս՝ լսելոյ լուիցէ, անդ եղիցի լալ և կրճտել ատամանց: Այս խօսքերուս ճշմարիտ ըլլալը լաւ հասկնալու համար այժմ ուրիշ յարմարաւոր առակ մըն ալ պիտի ըսեմ, որպէս զի լաւ խելքերնիդ հասնի, և որպէս զի ձեր մտաց մէջ լաւ տպաւորուի, որ ուրիշներուն ալ քարոզելու կարող ըլլաք:

Ժամանակաւ պարզ, միաւիտ, արդար, առաքինի և բարեպաշտ ճանապարհորդ մարդ մը տեղ մը գացած ժամանակը ճանապարհին վրայ ոսկի թաս մը այսինքն գաւաթ մը գաւա, և այն թասին մէջի կողմը այսպէս գրուած էր. կոյր եղողները թէ որ այս թասէն ջուր խմելու ըլլան պիտի լուսաւորուին, բայց այն թասը մարդոց չէնք չէր, որովհետեւ Աստուած իւր ձեռքերովը չինած էր այն ոսկի թասը, որ զոյգ էր և մէկզմէկու փակցուած, այնպէս որ մարդ կարող չէր այն թա-

տին զոյգ ըլլալն հասկնալու, վասն զի խիստ շատ վարպետութեամբ շինուած էր, վրայի թասին մէջ ինչպէս որ ըսի՝ այնպէս գրուած էր, կոյր եղողները թէ որ այս թասէն ջուր խմելու ըլլան՝ պիտի լուսաւորուին, և այն հրաշալի զոյգ թասին տիպը այսինքն դուրսի կողմէն այսպէս գրուած էր թէ՛ որոնք որ այս թասէն ջուր խմելէն վերջը և լուսաւորուելէն վերջը թէ որ նորէն կամքովն անհրաւութիւններու և անօրէնութիւններու մէջ ընկովին, և առանց զղջալու իրենց չարութիւններնին շարունակեն՝ այնպիսիները յաւիտեանականութեան մէջ անմարելի կրակներով պիտի այրին, և տիպի թասին մէջի կողմը այսպէս գրութիւն մը կար որ չէր տեսնուեր, գրուածը այս էր թէ. եթէ տգէտները այս այս թասէն ջուր խմելու ըլլան՝ իմաստուն պիտի ըլլան, Աստուած այս թասերը իւր ձեռամբը շինած էր և գիրերը իւր ձեռամբը գրած էր, և երկու կողմէն գիր ունեցող թասը միւս թասին տիպը փակցուցած էր, ու մէջը գրուած թասին շրթունքները, տակի թասին շրթունքներուն վրայ դարձունելով մէկգմէկու հետ փակցուցած էր, այնպէս որ բնաւ չէր գիտցուէր այն թասին զոյգ ըլլալը, վասն զի այն թասին չէնքը Աստուածային չէնք մ'էր, խիստ շատ վարպետութեամբ նուրբ և յարմար ձեւով շինուած էր, Աստուած այն թասը շինելէն յետոյ, հրեշտակի մը յանձնեց և պատուէր տուաւ թէ՛ այս թասը տար այսինչ տեղը ճանապարհին վրայ գիր, և հրեշտակը այնպէս ըրաւ, բայց թասին զոյգ ըլլալը հրեշտակն ալ չը գիտցաւ, և այն բարեպաշտ մարդը, այն թասը գտնելուն համար շատ ուրախացաւ, և մէջի գիրը կարդալով հասկցաւ և այն թասովը հարիւրաւոր կոյրերու ջուր խմցունելով լուսաւորեց, վերջապէս այն տակի թասը հազարաւոր արդարներու ձեռքէն անցաւ, բայց բնաւ երբէք մարդ մը կարող չեղաւ, այն ոսկի

թասին զոյգ ըլլալը հասկնալու, որովհետեւ Տէրը այնպէս տնօրինած էր, և այսպէս հարիւրաւոր հազարաւոր տարիներ անցնելէն յետոյ, այն ցեղէն արհեստով ոսկերիչ երիտասարդի մը տեսիլքին մէջ Աստուած յայտնի ըրաւ ըսելով թէ՛ ձեր ոսկի թասին տակը ոսկի թաս մը եւս փակցուած է, այն թասերը մէկգմէկէ զատես և անոնց մէջի ծածկուած գրութիւնը կարդալով ժողովուրդներուն քարոզես, որպէս զի ժողովուրդները այդ թասին յարգը գիտնալով՝ այն գրութիւններուն համեմատ կենցաղավարելու աշխատին, և որպէս զի ժողովուրդները նորէն լուսաւորելով՝ թէ աստ և թէ հանդերձելու մն երջանիկ ըլլալու աշխատին, վերջը այն ոսկերիչն այնպէս ըրաւ, այն ոսկի թասերը մէկգմէկէ զատեց և անոնց մէջի ծածուկ գրութիւնները ատենողները և լսողները զարմացան և սքանչացան ապշեցան և հիացան ըսելով թէ ինչպէս մենք այսչափ ժամանակ չենք իմացեր այս բաները, և ինչպէս մեր նախնիքները այսչափ հարիւրաւոր հազարաւոր տարիներ այս թասը գործածեցին և այս թասին զոյգ ըլլալը չի հասկցան, վերջապէս այնուհետեւ տգէտ եղողներն ալ միւս թասէն ջուր խմելով՝ իմաստուն կ'ըլլային:

Այս առակին համառօտ մեկնութիւնը այս է, այն ոսկի թասը շինողն արդէն Աստուած էր, և ոսկի թասը Աստուածաշունչ Սուրբ Գիրքը կը նշանակէ, այն հրեշտակը որ Աստուծոյ հրամանովը ոսկի թասը տարաւ և ճանապարհին վրայ դրաւ, մարգարէները կը նշանակէ, և թասը գտնողը առաքեալները կը նշանակէ, վրայի թասին մէջի գիրը Իրիստոսի վերաբերեալ մարգարէութիւնները են, միւս թասին դուրսի կողմի գրութիւնը դատաստանի վերաբերեալ մարգարէութիւնները կը նշանակէ, և նոյն թասին մէջի ծածուկ գրութիւնները մի հօտ և մի հովիւրն վերաբերեալ մարգարէութիւններն:

են, ինչպէս որ այն հրեշտակը թէեւ այն դասը տարաւ, ճանապարհին վրայ դրաւ, բայց թասին զոյգ ըլլալը և մէջի ծածուկ գրութիւնը չի գիտցաւ, այնպէս ալ մարգարէները թէեւ սուրբ հոգիէն շարժեալ և Աստուծոյ հրամանէն ստիպեալ այն մարգարէութիւնները գրեցին, սակայն մարգարէութիւններուն ամբողջ մեկնութիւնները չը գիտցան, և երեք մասնաւոր և գլխաւոր կրօնական մեծ մարգարէութիւնները մէկզմէկէ որոշելու չի կարողացան, վասն զի Տէրը այնպէս անօրինած էր և ինչպէս որ այն ոսկի թասը գտնողը և մինչեւ այն ժամանակը գործածողները այն թասին զոյգ ըլլալը, և մէջի ծածուկ գրութիւնները չը գիտցան, այսպէս ալ առաքեալները և մինչեւ ցայժմ Սուրբ Գիրքը կարդացողները, քարոզողները, երեք տեսակ մասնաւոր և գլխաւոր կրօնական մեծ մարգարէութիւնները կատարելագոյն մէկզմէկէ որոշելու չի կարողացան, և պէտք եղածին պէս Սուրբ Գիրքին իմաստը ամբողջովին չի հասկցան, վասն զի Աստուած այնպէս անօրինած էր, և ինչպէս որ Աստուած շատ ժամանակ անցնելէն յետոյ, այն ոսկի թասին զոյգ ըլլալը այն ոսկերիչ երիտասարդին յայտնի ըրաւ տեսիլքով, նոյնպէս ալ Տէրը երբոր մի հօտ և մի հովիւը ընելու բարեհաճի, մի հօտ և մի հովիւին վերաբերեալ մարգարէութիւններուն իմաստը իրեն ընտրած մարդուն յայտնի պիտի ընէ, որ այն մարդը Քրիստոսի մասնաւոր փոխանորդը և առաքեալը ըլլալով՝ Քրիստոսի շնորհիւրը և հրամանաւր եկեղեցիներուն մէջ գտնուած բաժանունները, գփտութիւնները և աւելորդապաշտութիւնները վերցնելով և եկեղեցիները մէկզմէկու հետ միացնելով մի հօտ և մի հովիւը պիտի ընէ:

Զորօրինակ, Յիսուսի ծննդեանը համար այսպէս մարգարէութիւն կար թէ՛ կոյսը պիտի յղանայ. և որդի պիտի ծնանի, և անոր անունը էմանուէլ պիտի կոչուի,

տես Նսայեայ եօթը դուրսը տասնընորս համարը. թէեւ այսպէս գրուած էր՝ բայց այս բանը քանի տարիէն վերջը պիտի ըլլար, և կամ թէ այն կոյսը որ ցեղէն պիտի ընտրուէր և կամ թէ այն կոյսին անունը ինչ պիտի ըլլար, յայտնի չէր, վասն զի Տէրը յայտնի չըրաւ, մինչև որ Փրկիչը աշխարհ եկաւ, այն ատենը յայտնի եղաւ, այսպէս ալ թէեւ մի հօտ և մի հովիւ ըլլալու վրայ Աստուծոյ հրամանաւր մարգարէութիւններ եղած են, բայց մի հօտ և մի հովիւը Քրիստոսի աշխարհ գալէն քանի տարի վերջը պիտի ըլլար կամ թէ՛ մի հօտ և մի հովիւին առաջնորդը ո՞ր ազգէն պիտի ընտրուէր, և կամ թէ՛ անոր անունը ինչ պիտի ըլլար, յայտնի չէր, վասն զի տէրը յայտնի չըրաւ, երբոր մի հօտ և մի հովիւ ըլլայ, այն ատենը յայտնի կըլլայ:

Զորօրինակ. Փրկիչը մէկ պարագային մէջ այսպէս ըսաւ. ամենքին որք յառաջ գան զիս՝ եկին գողք էին և աւազակք, տես Յովհաննու տասը դուրսը ութը համարը, այս խօսքերով հասկըցնել ուզեց թէ ինձմէ առաջ եկող մարգարէները իրենց քարոզութիւններուն և իրենց ըրած մարգարէութիւններուն իմաստը չի հասկըցան, միայն թէ սուրբ հոգիէն շարժեալ խօսեցան գրեցին գնացին:

Զորօրինակ, ժամանակաւ հայ մը ի մանկութենէ քիւրտերուն մէջ մնացած ըլլալուն համար հայերէն խօսիլ ընաւ չէր գիտեր, վերջը այն մարդը ողորմութիւն հաւաքելու համար քաղաք մը գնաց, բայց որ մէկ դուռը որ կը զարնէր՝ պարապ ետ կը դարձնէին, վասն զի անիկա չարագործ քիւրտ մը կարծելով բան մը չէին տար, վերջը բարեպաշտ իշխան մը այն մարդուն հայ ըլլալը և բարեսէր աղքատ ըլլալը գիտնալով անոր հագուստները փոխելով մի քանի հայերէն բառեր վարժեցուց, որ այնուհետեւ ողորմութիւն խնդրած ժամանակը

1025

այսպէս կըտէր, կաղաչեմ եղբայրներ ողորմեցէ՛ք, երանի ողորմածած, զի նոքա ողորմութիւն գտցեն եւն. եւն. :

Այնուհետեւ այն մարդուն առատօրէն ողորմութիւններ կուտային, բայց այն մարդը իր ըսած խօսքերուն իմաստը ինքը չի հասկընալուն համար կերպով մը գոզ կը համարուէր, այսպէս ալ մարգարէները իրենք ուսուցնականներ չէին, միայն թէ սուրբ հոգիէն շարժեալ խօսեցան, և իրենց ըրած մարգարէութիւններուն իմաստը իրենք չհասկընալուն համար Յիսուսին քովը իբր գոզ համարուեցան, այս պատճառաւ Փրկիչը ըսաւ թէ՛ ամենքին որք յառաջ գան՝ զիս եկին գողք էին և աւաղակք, և վերջապէս Փրկիչը բոլոր մարգարէութիւններուն ամբողջ մեկնութիւնները հասկցաւ և այս պատճառաւ ըսաւ թէ « հովտ մի որ նշանախեց մի է ոչ անկանիցի օրինաց և ի մարգարէից, մինչեւ ամենայն եւ զիցի: Մի հօտ և մի հովիւին ըլլալը այս հետեւեալ առակին ալ կը նմանի:

Ժամանակաւ ողորմած, գթած, մարդասէր և բարեխնամ ինքնակալ թագաւոր մը կար, որ մէկ հատիկ սերելի որդի մը և հաւատարիմ ծառայ մը ունէր, և այն թագաւորանիստ քաղաքէն բաւական հեռու քաղաք մը կար, որ այն քաղաքին բնակիչները բոլորն ալ աղքատութիւններու և թշուառութիւններու մէջ կը տառապէին, այս պատճառաւ այն բարեխնամ թագաւորը իւր հաւատարիմ ծառան՝ շատ օգտակար պատուէրներով այն քաղաքը զրկեց, որ զնաց այն քաղաքին մէջ թագաւորին հրամանները քարոզելով ըսաւ. թագաւորը այս քաղաքին բնակիչներուն առանց տոկոսի՝ պարտամուրհակով ստակ պիտի տայ, որպէս զի ժողովուրդները իրենց դրամագլուխ ընելով ժամանակ մը ապրին, մինչև որ հարստանան, այժմ թագաւորին հրամանը այս է: Որոնք որ առանց տոկոսի պարտամուրհակով ստակ առ-

նել կուզեն՝ թող գան որ անուաններնին գրեմ, և ցուցակը թագաւորին տանիմ, վասն զի ձեզի արուելիք ստակը թագաւորը իր որդւոյն հետ ձեզի պիտի զրկէ. այնուհետեւ շատերը իրենց անուաները գրել տուին, վերջը այն հաւատարիմ ծառան այն գրուածներուն ցուցակը տարաւ թագաւորին տուաւ, այնուհետեւ այն բարեխնամ թագաւորը իր որդւոյն հետ բեռներով ոսկի զրկեց, որ տարաւ այն քաղաքը՝ պարտամուրհակներով բաժնեց, ոմանք ամէն մէկերնին հազարական զուրուշ առին, ոմանք ալ ամէն մէկերնին երկու հազարական զուրուշ առին, և ոմանք ալ իրենք զիրենք հարուստ ձեւացնելով՝ ընաւ ստակ չառին, և առնելու զիչում չըբրին, մենք պարտամուրհակով ստակ չենք առներ ըսին: Վերջապէս երկու տեսակ բաժնեց այս ստակները, ոմանց հազարական զուրուշ և ոմանց ալ երկու հազարական զուրուշ բաժնելով և պատուէրները տալով պարտամուրհակները առաւ զնաց: Այսպէս շատ ժամանակ անցնելէն յետոյ դարձեալ այն քաղաքին բնակիչները անպատմելի թշուառութիւններու և քաւորութիւններու մէջ տառապիլ սկսան, իսկ այն բարեխնամ թագաւորին հաւատարիմ ծառան մեռած էր և անոր տեղը ուրիշ հաւատարիմ ծառայ մը ընտրած էր, և այն թագաւորը իւր երկրորդ հաւատարիմ ծառային հետ նորէն բեռներով ոսկի զրկեց այն քաղաքը, և այսպէս պատուէր տուաւ. որոնք որ ամէն մէկերնին հազար զուրուշ պարտք ունին՝ այնպիսիներուն ամէն մէկերնուն երկու հազար զուրուշ եւս տաս, և հին պարտամուրհակները պատուելով՝ երեք հազար զուրուշնոց պարտամուրհակներ առնես, և որոնք որ ամէն մէկերնին երկու հազարական զուրուշ պարտք ունին՝ հազարական զուրուշ եւս տալով՝ երեք հազարի պարտամուրհակներ առնես, բայց որոնք որ ընաւ պարտք չունին, այնպիսիներուն ալ ա-



մէն մէկերնուն երեք հազարական զուրուշ տալով՝ երեք հազար զուրուշնոց պարտավորակներ առնես, որպէս զի ամենքնուն ալ պարտքերնին հաւասար ըլլայ, և պատուէրներ տաս որ դրամագլուխնին չի վատնեն, այսինքն հաւատչնին հաստատ պահեն, վասն զի երբոր ես ուզելու ըլլամ՝ նորէն իմ որդիս պիտի զրկեմ, և իմ առնելիքներս պիտի պահանջեմ, և այն երկրորդ ծառան թագաւորին հրամանին հնազանդելով այնպէս ըրաւ, և այն բարեխնամ թագաւորը իւր առաջին զըրկած ծառային բրդեղէն հագուստներ հագցուցած էր, և իրեն որդւոյն մետաքսեղէն հագուստներ հագցուցած էր, բայց վերջի զրկած երկրորդ ծառային բամպակեղէն հագուստներ հագցուցած էր, ահաւասիկ մի հօտ և մի հովիւին ըլլալը այս առակին ալ կը նմանի, և այս առակին համառօտ մեկնութիւնը այս է:

Այն բարեխնամ թագաւորը Աստուած է, և քաղաքըն ալ այս աշխարհս է, քաղաքին թշուառ բնակիչները այս աշխարհին ժողովուրդներն են, և այն առաջին բրդեղէն հագուստներով ծառան Մովսէս ժարգարէն էր և անոր ձեռքովը եղած քարոզութիւնները կը նշանակէ, մետաքսեղէն հագուստներով որդին Յիսուս Փրկիչը և անոր քարոզութիւններն են, և բամպակեղէն հագուստով ծառան «մի հօտ և մի հովիւին» առաջնորդը և անոր քարոզութիւններն են, և ինչպէս որ այն թագաւորին որդին վերջը իւր առնելիքները պիտի պահանջէր, այսպէս ալ Յիսուս Քրիստոս Փրկիչը վերջը դատաստան պիտի ընէ, և ամէն մէկերնուն իրենց գործքերնուն համեմատ հատուցում պիտի ընէ...: Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ:

Տէրը արդարութեան և ճշմարտութեան պաշտպան ըլլայ. ամէն:

Մնամ մշտնջենաւոր զոհ և կենդանի նահատակ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ անձնուէր մշակ
ՎԱՀԱՆ ՔԱՀ. ԺԱՄԱԿՈՉՅԱՆ

Զմեկաժագցի

Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոց
1909 Մարտ 7

Վ

Վահան քահանային ձայնը լսեցէք
Հրաւերը մի մերժէք ընդունեցէք
Արդարութիւնը միշտ սրտով սիրեցէք
Սուրբ ճշմարտութիւնը ամուր բռնեցէք:

Ա

Աստուածային պատգամները գրեցի
Պաշտօնական մարմիններու խաւրեցի
Ուշադրութիւննին հրաւիրեցի
Նըկատողութեան առէք աղաչեցի:

Հ

Հակառակորդներուս միշտ հաւատացին
Ճշմարտութիւնը յայտնապէս ատեցին
Անիրաւութեամբ զիս դատապարտեցին
Խաւարը սիրելով լոյսը մերժեցին:

Ա

Անիրաւներէն ես միշտ հալածուեցայ
Խիստ դառն վիշտերով շրջապատուեցայ
Բայց Աստուծոյ շնորհիւր զօրացայ
Զարչարանքի տոկալու կարողացայ:

Ն

Նշանաւոր ողբեր շարագրեցի
Կրօնական ժողովին ուղարկեցի
Իմ խընդիրս քննեցէք աղաչեցի
Բոլորովին ես ապարդիւն մնացի:

Ք

Քրիստոսի խօսքերը քարոզեցի
Հաւատացողները ուրախացուցի
Մի հօտ մի հովը բացատրեցի
Պարտաւորութիւններըս կատարեցի :

Ա

Անիրաւները եղկելոյս բարկացան
Ճշմարիտ խօսքերուս հակառակեցան
Ատելութեամբ նախանձութեամբ լեցուեցան
Զիս դատապարտելու միաբանեցան :

Հ

Հակառակորդներս զիս զրպարտեցին
Մօլորեցուցիչ վարդապետ կոչեցին
Արդարութեան ձայնը չը ճանաչեցին
Զիս սըտախօս մեծ յիմար մը կարծեցին :

Ա

Աստուած վերէն օգնութիւն պիտի ընէ
Արդարութիւնը յայտնի պիտի ընէ
Բոլոր ազգերը ազգ մը պիտի ընէ
Բռնութիւնը բնաջինջ պիտի ընէ :

Ն

Նոր Յովնան մը պիտի լինիմ այն ատեն
Այսպէս քարոզեցի ես ամէն ատեն
Անիրաւները թող նորէն զիս ատեն
Ուզածնուն չափ ամբաստանեն զրպարտեն :

Ա

Անխիղճները ամօթով պիտի մնան
Պատժուելով աչքերնին պիտի բանան
Անիրաւ ըլլալնին պիտի հասկընան
Սըխալ ճանապարհէն ետ պիտի դառնան :

Յ

Յիսուսին խօսքերը պիտի կատարուին
Խռովութիւնները պիտի վերցուին
Բոլոր ազգերը պիտի լուսաւորուին
Մէկ օրէնքով պիտի կենցաղավարուին :

Ի

Իմ գրած գիրքերըս սիրով կարդացէք
Պարունակութիւններուն հաւատացէք
Կարդացածնուդ իմաստը լաւ հասկըցէք
Հասկըցածնիդ այլոց բացատրեցէք :

Ն

Նոր հրաչք մը պիտի գործէ Յիսուսը
Պիտի ծաղկեցունէ նորատունկ բոյսը
Փառքով պիտի պըսակէ անոր յոյսը
Զեր սիրտերէն վերցուցէք տարակոյսը :

Խ

Խաղաղութիւնը շատ պիտի բազմանայ
Խըտրութիւնը պիտի ոչընչանայ
Գայլը գառնուկին պիտի ընկերանայ
Առիւծը եզին հետ պիտի քնանայ :

Ն

Նոր սիրտ պիտի տրուի բոլոր մարդկութեան
